



Ա Ր Ա Ր Ա Տ

ՌԻԻ ԺԲ. — ՇՐՋԱՆ ԺԷ.

1884

ՏԱՐԻ ԺԷ.

ԴԵԿՏԵՄ. 31.

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ.

Երկնքի պատգամաւոր, սուրբ ճշմարտութիւն, յուսոյ աստղ՝ ամպամած գիշերը, մութ միջոցին դու լոյս ծագեցիր. կասկածանքի միջոցին մխիթարութիւն, բերրի, ինչ որ կեղծ է ու մօտենում է քո լուսին, ոչնչանում է, իմաստունների կեղծ ճարտարութիւնը քո դօրութիւնից հալածվում, անհետանում է. Ստեղծողի վառած կրակը թող շարունակ լոյս տայ սրտերի մէջ, մինչեւ որ մարդիկ սերտ կապուած միմեանց հետ, միայն Աստուծոյ խօսքին հնազանդին, Ո՛վ ճշմարտութիւն, սրտանց կցանկամ ես քո կողմը լինել, քեզ համար կռուելով, մաքաւելով, քեզ հաւատարիմ մնալ, թող աշխարհքս աշխարհքով անց կենայ, դու հօ յաւիտեան կմնաս:

Մարդոյ որդին Յիսուս Քրիստոս այս խոր միտք ունեցող խօսքերն ասաց Նիկողիմոս անունով Հրէից այն իշխանին, որ գիշերը եկել էր աստուածային ուսուցչի մօտ ճշմարտութիւն սորվելու. «Բայց այս է դատաստանն, որ Լոյսն աշխարհք է եկել, եւ մարդիկ խաւարը աւելի սիրեցին քան թէ լոյսը, պատճառն որ իրանց գործերը չար էին: Ով որ չար բան է անում, ատում է լոյսը, որ իւր երեսին չառեն գործերը. բայց ով որ ճշմարիտն է անում, նա գէպի լոյսն է գալիս, որ իւր գործերը յայտնի լինին թէ՛ Աստուծով գործուեցին»: Նազօրեցի աստուածային իմաստունի այս ասած խօսքերի մէջ մի գեղեցիկ՝ շատ անգամ՝ միակ մխիթարութիւն կայ ազնիւ հոգւոյ տէր մարդոց համար:

Ազնիւ հոգւոյ տէր մարգոյ համար մի գեղեցիկ մխիթարութիւն է, որ իրանք վերջը՝ վերջը ականատես և ականջալուր վկաները պէտք է լինին օրուայ լոյսը ծագելուն ընդհանրապէս փայրենացած վարքի, խաւարի գործերի վրայ. կտեսնեն ճշմարտութիւնն, որ վերջապէս կյաղթի երկար ժամանակ աստուածացուցած սուտին, հպարտ կեղծաւորի երեսի վերայ դրած դիմակը կհանի, դէն կը-
ձգի, հաւատի վերայ անտեղի սրախօսութիւններ ասող ու ծիծա-
կողի անհամ ու անմիտք խօսքերը ջարդ ու փշուր կանի, իշխա-
նութիւն բանեցնել սիրող խորամանկ փարխեցուն հողի հետ կհա-
ւասարեցնի:

Ազնիւ հոգւոյ տէր մարգոյ համար մի գեղեցիկ մխիթարութիւն է, որ ճշմարտութիւնը վերջապէս կյաղթի և անարգուած ու ծաղր եղած տուաքինութիւնը, անպատիժ ոտնակոխ եղած իրա-
ւունքն իւր տեղը կդնի այն ժամանակ, երբ որ լաւ հոգւոյ տէր մարդիկը իւրեանց աչքովը կտեսնեն, որ երկնքի ու երկրի վերայ այլ ևս սուրբ բան չմնաց. երբ որ կտեսնեն ուսումն տուած ու լուսաւորուած մարգոյ Քրիստոսի վերայ ծաղր անելու կերպով նայելն և հաւատից ամաչելն այնպէս, ինչպէս որ մարդ իւր արած երեխայութիւնից է ամաչում. երբ որ կտեսնեն թէ՛ ինչպէս աւե-
լի մեծ բազմութիւն մարգոյ, բարձի թողի եղած կառավարու-
թիւնների և ուսուցիչների կողմից՝ ու իրանց գլխին մնացած, սիրտ չդիմանալու թերահաւատութեան, խոր ու թանձր տգի-
տութեան մէջ իրրեւ ցեխի մէջ խրուած ու թաղուած են, ոչ ի-
րանց մարդկային արժանաւորութիւններն են ճանաչում, ոչ Աս-
տուծոյ վերայ մի արժանաւոր գազափար ունին, և ոչ իրանց յա-
ւիտենական կոչման մասին. երբ որ կտեսնեն թէ՛ ինչպէս եկեղե-
ցականներն, Աստուծոյ խօսքը, Յիսուսի տուած ուսման քարո-
ղիչներն իւրեանց կոչման սուրբ պարտականութիւնները միայն հացի համար են կատարում, իբրեւ մի արհեստ բանեցնում. երբ
որ կտեսնեն թէ՛ ինչպէս հասարակ ժողովրդին՝ իրանց տգի-
տութեան մէջ հաստատում են, այն տգիտութեան մէջ, որոյ
վերայ իրանք ծիծաղում են ու ծաղր անում. մարդասիրութիւն
են քարոզում, ու մի և նոյն ժամանակ իրանց իրաւունք են տա-
լիս ուրիշներին տաելու, նոցա սրտգոյթ զնելու, դաւաճանութիւն
անելու. ամբարտաւանութեան տաող, ու հակառակ են ձեւանում,
բայց սիրաները իշխանութիւն բանեցնելու կրակովն այրվումէ:

և այն մարդուն, որ իրանց անարգութեան գործերը անահ՝ աներկիւղ յայտնումէ, հալածելով մինչև բանան են տանում:

Ազնիւ մարդոց համար մի գեղեցիկ միջոցառութիւն է գիտեանալը թէ՛ վերջապէս կգայ, կըհասնի այն օրերը, որ ճշմարտութիւնը կը յայտնուի իբրև վրէժխնդիր իրան անարգողներին և կըխայտառակի թէ՛ ժամանակին և թէ՛ ապագայումն աշխարհքումն ապրող մարդոց առաջը ազգերի իրաւունքները բռնաբարողներին, գերեբար կեղծաւորողներին և աստուածացնողներին այն մարդուն, որ մի կարճ ժամանակ յաղթանակ է կանգնել ժողովրդեան արիւնը ծծողներին, որոնք երկիրների սահմաններ են փոխում, որ լիութեան մէջ փառաւոր ապրեն. խարդախ դատաւորներին, որոնք իրաւանց և արդարութեան ոչ թէ ծառաներն են, այլ վաճառողներն. անհաւատարիմ պաշտօնեաներին, որոնք իրանց ձեռքի տակի մարդոց հետ խտրութեամբ են վարվում ու նեղութիւններ տալիս: Ահաւոր դատաւորանի օր կայ այն մարդոց առաջն, որոնք իրանք իրանց քրիստոնեայ են ասում ու քրիստոնէութեան նշան չկայ վրաները, որոնք Աստուծոյ տեղ իրանց սեպհական օգուտն են պաշտում: Բայց այս է դատաւորանի որ լայն աշխարհ է եկել: Այն, եկել է: Զօւր էք յոյս կապել ձեր արարմունքն վարպետութիւնով աշխարհի աչքիցը ծածկելու: Զօւր տեղն էք յոյս կապում ձեր ունեցած անունովն, ազգեցութիւնով և իշխանութիւնովն, որ այժմ ունիք, ձեր խարդախութիւններն արդէն հասկացած համարձակ մարդոց աչքը վախեցնելու: Ի վեր էք աշխատում ձեզ հետ կապելու բարեկամութիւնով, պարգեւներով, վարձատրութիւններով այն մարդոց, որ ձեր գաղտնի ամօթալի գործերը գիտեն: Կլուանայ այն օրը, որոյ մէջը ձեր ժամանակի ու ձեզանից յետոյ ապրող մարդիկը ձեր դատաւորանը կանեն:

Մարդիկ, ասումէ Յիսուս, խաւարն աւելի սիրեցին քան ինչ որ իրանց գործերը չար էին: Երբ որ Յիսուս աշխարհք եկաւ, մարդոց աւելի քան թէ մեծ մասը ստոր զգայականութեան մէջ կորել էին: Ազատութիւնն աշխարհիս երեսից բորձուել էր. միայն բռնակալներ ու անկամք գերիներ կային, որոնք իրանց յանգուգն, ամբարտաւան, քմահաճոյ իշխողներին խուսկ էին ծխում: Իշխողները միայն իրաւունքների տէք էին, իսկ հպատակ ազգերը միայն պարտականութիւններ ունէին կատարելու: Բռնակալների

գոռողութեան համար ազգեր պէտք էր անվերջ պատերազմների մէջ արիւն թափէին: Հազար ու մի աստուածների սեղաններ էին կանգնել, բայց զէպի տիեզերքի անտեսանելի կենդանի Աստուածն քիչ մարդիկ էին հոգւով ու մտքով բարձրանում: Դպիրները վիճումէին սուրբ գրքի ամեն տեսակ մեկնութիւններ տալու վերայ, այլ և այլ ծայրայեղութիւնների մէջ ընկնելով, բայց Աստուծոյն հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւն անելն և նորա՝ մարդիկ երջանկացնելու՝ պատուիրածները պահելն ու կատարելը երկրորդական բան էր երեւում: Փարիսեցիքը տաճարների մէջ բարեպաշտութիւն էին վրաներիցն երեւցնում, կամ կուրացնում էին ժողովրդին առերևոյթ առաքինութիւնով, ամեն կերպով յորդորում էին զոհեր անելու, պատեր պահելու և ուրիշ արտաքին աստուածաբաշտական գործեր կատարելու, բայց իշխող մութութիւններից մարդոց սիրտը մաքուր պահելուց հեռու էին: Ժողովուրդը աւելորդապաշտութեան և տգիտութեան խաւարի մէջն էր: Ով որ համարձակւում էր օրէնքի լուսաւոր մեկնութիւնը տալու, ատւում էր, հալածւում, բանտ մտնում կամ թունաւորւում էր, և երբեմն՝ կրօն անորգողի անուն էր ժառանգում, երբեմն ժողովուրդը ճանապարհից հանող հրատարակւում, երբեմն էլ մարդոց գլխից խկապէս հանող խռովարար համարւում: Ինչու որ մարդիկ խաւարն աւելի էին սիրում՝ քան թէ լոյսը, որովհետև իրանց գործերը չա՛ր էին:

Բայց Յիսուս, ճշմարտութիւն յայտնողը, եկաւ և խաւարի մէջը լոյս բերեց: Նա մարդկային իրաւունքների և պարտաւորութիւնների, նշանակութեան և յոյսերի ճանաչումը ոչ միայն մի քանի գիտունների սեպհականութիւնն արեց, այլ տարածեց ազգի բոլոր անգամների մէջը, տարածեց ամենայն ազգերի մէջը: Ամենազքատ մարդն անգամ ընդունեց նորա ստուած այգալիսի ուսումը, ամենաուղէտ մարդն անգամ հասկացաւ նորա ասածներն ու պատուիրածները:

Այն ժամանակ մարդ – թագ ու պատկ համարուած մոլութիւնները դողացին. ինչու որ տեսան թէ՛ իրանց վերջը եկել է: Այն ժամանակ ահուգողի մէջ ընկած բռնակալները սարսափեցին, ինչու որ վախենում էին որ ճշմարտութեան հետ ազատութիւնը աշխարհը կմտնի: Այն ժամանակ կատաղեցան սուտ քահանայքը, ինչու որ այժմ՝ ամեն մէկը նորանցից ճանաչեց իւր անարժանութիւնը, և

թէ ճշմարիտ քահանայութիւնը հազուադէպ մէջ չէ, այլ իմաստութեան ու հոգեւոր սրբութեան մէջ: Այն ժամանակ կատարեցին յարագործները ինչու որ բռնութեան խօսքերն ու հրամանները էլ տեղ չի պիտի ունենային, ինչու որ էլ կարելի չէր մեղքերի թողութիւն ստանալ Երկնաւորից՝ միայն արտաքին բարեպաշտական գործերով: Սորա համար նոքա հալածեցին Յիսուսին, որ աշխարհքի լոյս էր դարձել և քաջաքաջ տարան նորան խաչելու: Պատճառը որ լաւ գործի պէրը լոյսը կապի, որ էր գործերովը չէր պատճառէ:

Բայց իզոյ՛ր:—Այս է ճշմարտութեան զօրութիւնը, որ նա աշխարհի բռնակալին իւր ակնարկից ցած կձգի ու պատերազմի զօրքերի ղէնքերը ցած գնել կտայ, հազար տարուայ շղթաները կրկնորի, սուտ իմաստունների կախարդութեամբ: սարքած խօսքերն ու ազօթքները կխայտառակի աշխարհքի առաջ: Երեսուցէ մի տաճարը կործանուեց, հեթանոսութեան սեղանները քանդուեցան, երկրիս վերայ տիրող հռոմէական գաւազանը փշրուեց, հին թագաւորութիւնները ջնջուեցան, նորերն առաջ եկան—բայց այս ամէն յեղափոխութիւնների մէջ յաղթող ու հաստատ մնաց իւր տեղն Յիսուսի տուած ուսումը: Երկինքն ու երկիրն էլ որ անցնեն երջանկացնող ճշմարտութիւնը յաւիտեան կմնայ:

Բայց խաւարի որդիքը շարունակ պատերազմումէին Աստուծոյ լոյսն աշխարհիս մէջ տարածուելուն դէմ: Բարբարոս ազգերի բրդութիւնն ու տգիտութիւնն օգնութիւն հասան նոցա: Դորա վերայ ուրախացան նոքա, որոնք որ խաւարը սիրումէին: Հին դարերումն՝ ինչ բարի, մեծ ու գեղեցիկ բան՝ որ յառաջ էր եկած, փչացրին, ոչնչացրին: Մարդոց արած անմոտութիւնները մին մինի ետեւից անց կացան, մոռացուեցան. —բայց կեանքի ճշմարտութիւնը յաւիտեան կմնայ:

Դեռ այսօր էլ Յիսուսի տուած ուսման լոյսը կռւումէ բարբարոսութեան գիշերի հետ և անյաղթելի ճշմարտութիւնը՝ մոլորութեան հետ: Եթէ Յիսուս այսօր էլ ման գար երկրիս վերայ իւր աստուածային կերպարանքովն. նա, սկզբնատիպն ու իսկական պատկերն ամբիժ առաքիլութեան, անճառելի խոնարհութեան, որ յօժարումէր զրկել իրան բոլորովին այն բանից, ինչ որ աշխարհասէր մարդս պատվումէ՝ իբրև իւր ցանկութիւնների, փափագածի ամենափառաւոր նպատակը, քրիստոնեաներից քանիսը արգեօք նորա վերայ մոռիկ կտային: Երկրիս մեծերից քանիսն են ար-

դեօք, որ գէտ ի նորա սեղաններն են գնում, իրանց աշխարհա-
կալութեան սէրը կիժողնէին և ազգերին աւելի բաղբաւորեցնել
կաշխատէին՝ քան թէ նոցա արիւնը թափելով փառաւորուել։
Քանի քանիսնեքն արդեօք այն մարդկանցից, որ խաչուած Յի-
սուսի քարոզիչներ են դրել իրանց անունը, իրանց ունայնասիրու-
թիւնից ձեռք կ'քաշէին, որ իրանց վարդապետի նման սուրբ և
և ազնիւ լինին։ Ինչքան կեղծաւորներ, որքան անառակներ,
ինչքան վաշխառուներ արդեօք իրանց մոլութիւնից կ'հրաժար-
ուէին, որ նորան հետևեն, նորա գնացած ճանապարհովը գնան։
Քանի քանի ունեւորներ արդեօք իրանց ունեցած կարողութիւնն
աւելի լաւ բաների վերայ գործ կ'ածէին, որ նորա ճշմարիտ աշա-
կերտները լինին։ Սէ երբ որ Յիսուս մեր մէջն իւր անմեղութեան
մեծ վայելչութիւնովն իւր ձայնը բարձրացնէր Աստուծոյ տաճար-
ները պղծելուն դէմ՝ առերևոյթ բարեպաշտութիւնով ու սովորա-
կան արարողութիւններ կատարելով. երբ որ նա վրէժինդիր
մարդուն բարձր ձայնով ասէր՝ սիրեցէք ձեր թշնամիներին. երբ
որ նա կոյր ամբոխին ասէր՝ այս ժողովուրդը բերանովն է ինձ մօ-
տենում ու իւր շրթունքներովն է ինձ պաշտում, բոց սրտովն
ինձնից հեռու է, ի դուր են ծառայում ինձ, պատճառն սր այն-
պիսի ուսումներ են սորվեցնում, որ մարգոց պատուիրած են. —
երբ որ նա այս բաներն ասէր, այսօր էլ արդեօք չէին տեսել նորա
համար թէ՛ երազատես է, կամ ժողովուրդը գլխից հանող է, կամ
յայտնի թշնամի է սովորական աստուածապաշտութեանը, հերետիկոս
է, Աստուծոյ սեղանին ու թագաւորական աթոռին հակառակ,
փոխանակ պատուելու։ Արդեօք չէ՞ր գտնուիլ կատաղած մի ժողո-
վուրդ, որ էլի մի անգամ գողար թէ՛ խաչեցէք, խաչեցէք դորան։

Այս՝ դեռ ևս այսօր էլ ճշմարտութեան յոյսը մրցումէ՛ մոլո-
րութեան խաւարի և ինքնասիրական ցանկութիւնների դէմ. և
այս պատճառաւ այսօր ևս չորը գործողը՝ աստուծէ լոյսը, որ իւր
գործերը չպատժուին։ Բայց Աստուծոյ խօսքը կ'մնայ յաւիտեան.
ճշմարտութիւնը կ'յաղթանակի։ Ձեր թագաւորութիւնները կ'կոր-
ծանին, ձեր դպրոցական իմաստութիւնը կ'մոռացուի, ձեր կեղծ
բարեպաշտական մեծամտութիւնը կ'ոչնչանայ։ Ճշմարտութիւնը
դատումէ ձեզ իբրեւ անաչառ դատաւոր. ձեզ կ'զատի մեռելոց
դատաւորի բերանովը, յաւիտեանական կեանքի ահ ու արհաւիրք-
ներով։ Ճշմարտութիւնը չէք կարող բռնի բանատրկել, ոչ էլ շրջ-

Թայեւ, կամ հալածական անել հոգիների թագաւորութիւնից տանջանքներով, կամ արսորանքով: Ճշմարտութիւնը խոստովանողին մեռցրէք, բայց հոգին չէք կարող սպանել ու ճշմարտութիւնը անմահ կմնայ:

Բայց ով որ ճշմարտութիւն է անում, նա դէպի լոյսն է գալիս, որ էւր գործերն յայտնի լինին, թէ Աստուծով գործուեցին: Նա գէպի լոյսն է գալիս, որովհետեւ Աստուծով է անում, ինչ որ անում է և Աստուած նորա հետն է և Աստուած է նորանով գործում: Նա գէպի լոյսն է գալիս, մարդոյ գոտաստանից չէ վախում, նորա գործերը Աստուծով են գործուած: Ինչո՞ւ համար նա մարդկանցիցը պիտի քաշուի: Ճշմարտութեան բարեկամն ինքն ամենևին վախ չունի, բայց սարսափելի մարդ է ամեն մի չարագործի համար, որ վախենում է իւր արարմունքները չբացուին, չխայտաւակուին:

Ճշմարտութեան զօրութիւնը այնպիսի մի բան է, որ իւր բարեկամին ոգևորում է, նորան մի վսեմ՝ աստուածային՝ աներկիւզ սիրտ է տալի ու սորվեցնում է մահուան ամեն արհաւիրքները արհամարհել: Տկարին հոգւոյ այժ է տալի, որ համարձակ և անվախ աշխարհիս հզօրի երեսը գայ, կանգնի: Ամենահասարակ մարդուն մի վսեմութիւն է տալի, որից իւր մեղքը ճանաչող բռնակալը դուրս է: Տգէտին ճարտարախօս է անում, որ խորամանկութեան ամենայն համոզիչ վարդապետութիւնները նորա լեզուի առաջը խայտաւակուին, ճշմարտութեան լուսի ճառագայթը զարմանալի տրագութիւնով ամեն հոգիների մէջ թափանցում է և յաղթում է ամենին, որոնք նորան դէմ դնել են ուղում:

Ով որ մարդկային ազգին մի նոր ճշմարտութիւն է բերում՝ աւելի մեծ յաղթութիւն է անում՝ քան թէ այն աշխարհակալը, որ իւր զէնքի զօրութիւնովը մի համաշխարհական թագաւորութիւն է կանգնում: Ինչո՞ւ ես գողում գու, ով փոքրոգի մարդ, քու պարտականութիւններդ կատարելումը, տանջուելով մաքումդ, որ դու կգայթակղեցնես ուրիշներին քո պարտաճանաչութիւնովդ: Ինչո՞ւ ես ամաչում աշխարհի առաջը այնպէս անխարդախ, ճշմարիտ, արդար ու բարեպաշտ լինելուցդ, ինչպէս որ կարող էիր լինել, այնպէս ճանաչուելու, ինչպէս որ դու յիրաւի քու մէջդ մտածումես ու ես: Դէպի լոյսը եկ, որ քո գործերդ յայտնուեն, թէ Աստուծով են գործուած:

Ուրեմն մի լքանիր, ով դու ճնշուած ազնիւ հոգի, քո անմե-

ղութիւնդ զուր տեւն է գիշերուան խաւարի մէջ թաղւում: Ճշմարտութեան ճառագայթը լուսաւորում է մինչև անգամ գերեզմանները: Եթէ կենդանի մարդիկն էլ լռեն, Աստուած մեռելներին լեղու կտայ՝ քո արգարութիւնդ լոյս աշխարհ հանելու համար: Մի լքանիր, դեռ ևս Աստուած առաքինութիւնը բոլորովին կորչել չէ թողել. արգարութիւնն իւր պաշտպանը կգտնի մինչև այն մարդոց խցճմանքի մէջն, որ երգուել են քո կորուստդ տեսել: — Մի լքանիր դու, որին աշխարհքն չէ ուզում ճանաչել ու դրդարտումէ. եթէ ճշմարտութիւնն ես արել, քո գործերդ կյայտնուին, որովհետև Աստուծով են գործուած:

Երկնից գուստը, սուրբ ճշմարտութիւն, իմ աստղս էլ եղիր դու և տար, անցկացուր ինձ կենաց ամենայն մոլոր ճանապարհների միջով: Երբ որ ուղղութեամբ սրտի պատերազմած կլինիմ այս աշխարհիս ամենազնիւ գանձուն համար, այն ժամանակ մի օր մտնեցայ թոյլ իմ մահուան անկողինքիս այն երջակացնով զգացումը թէ՛ զուր չեմ ապրե՛լ: Այն ժամանակ գաս, երբ ես ինձ կըգտնեմ լի մխիթարութիւնով. դու ի վերուստէն եկած պատգամաւոր, այս անցուոր երկրիցս առնելու, տանելու ես կատարելութեան աշխարհն, որոյ մէջը իմ այս տեղ կցկոտուր կերպով իմացածս յաւիտենական կենաց ճառագայթովը պայծառանալու Հոգի՛ ճշմարտութեան, հոգի իմ փրկչիս Յիսուսի Քրիստոսի, ինձ հե՛տ եղիր: Մի թողնիր ինձ՝ ու քեզ յաւիտեանս հաւատարիմ կմնամ:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.